

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Աննա Ռուբիկի Հակոբջանյանի՝ «Անձի ինքնակարգավորման մեխանիզմների դերը առողջության պահպանմանն ուղղված վարքում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԹ 00.01 «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Աննա Հակոբջանյանի «Անձի ինքնակարգավորման մեխանիզմների դերը առողջության պահպանմանն ուղղված վարքում» ատենախոսությունը արդիական է՝ հաշվի առնելով այն, որ ժամանակակից փուլում սոցիալ-տնտեսական, էկոլոգիական, բնակլիմայական պայմանների ազդեցությունը մարդու կյանքի վրա բացասականորեն է անդրադառնում նաև առողջությանը: Ընդ որում, հաճախ ուշադրություն է դարձվում արդեն առաջացած առողջական խնդիրների լուծմանը, ոչ թե կանխարգելիչ միջոցառումներին: Ավելի, քան երբևէ արդիական է դառնում առողջության պահպանմանը ուղղված անձի ինքնակարգավորման մեխանիզմների ուսումնասիրումը և զարգացումը, որպեսզի մարդը ինքը կրի պատասխանատվություն սեփական առողջության պահպանման համար և կարողանա վերահսկել այն: Միայն անձի իրազեկվածությունը խնդրի վերաբերյալ բավարար չէ առողջական խնդիրների առաջացման հավանականությունը նվազեցնելու և առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման համար: Առողջության պահպանմանն ուղղված վարքի ձևերի ամրապնդման մեխանիզմների ուսումնասիրումը, առողջության պահպանման ներքին մոտիվացիայի զարգացումը կարևոր դեր է խաղում հիվանդությունների կանխարգելման հարցում:

Ելնելով թեմայի արդիականությունից՝ ատենախոսը իր աշխատանքի նպատակն է համարել ուսումնասիրել անձի ինքնակարգավորման մեխանիզմների առանձնահատկությունները և կանխորոշիչ դերը առողջության պահպանմանն ուղղված վարքում, մասնավորապես՝ առողջ սնվելու, մարզվելու և ծխելը թողնելու վարքաձևերում:

Ատենախոսը իր աշխատանքում վերլուծության է ենթարկել բազմաթիվ ժամանակակից գրական աղբյուրներ, որոնցից մի քանիսը ծառայել են որպես մեթոդաբանական հիմք իրականացված հետազոտության համար: Դրանցից են Ա.Բանդուրայի սոցիալ-կոզնիտիվ տեսությունը, Մ.Ֆիշբեյնի և Ի.Այզենի գիտակցված գործողությունների, Ի.Այզենի պլանավորած վարքի տեսությունները, Գ.Հոլբաումի առողջության վերաբերյալ համոզմունքների մոդելը, Ջ.Բերիի առողջության մշակութային պայմանավորվածության՝ սովորույթների, ավանդույթների դերի ուսումնասիրությունները առողջության վերաբերյալ համոզմունքների ձևավորման մեջ և այլ: Աշխատանքի մեթոդաբանական հիմքը կազմում է ատենախոսության կարևորագույն առավելություններից մեկը՝ ամուր ապացուցողական հիմքի վրա դնելով կատարված հետազոտությունը և ստացված արդյունքները:

Ատենախոսը նաև իր աշխատանքում հիմնվել է ԱՀԿ-ի նորագույն տեղեկատվության վրա: Աշխատանքի հետազոտական մասը բաղկացած է երեք հիմնական փուլերից, որոնցից առաջինում հարցման մեթոդի կիրառմամբ դուրս են բերվել հիմնական առողջ սնվելու, ծխելը թողնելու և մարզվելու վարքաձևերը, որոնք և ուսումնասիրվել են հետազոտական հաջորդ փուլերում: Երկրորդ փուլով մշակվել է հետազոտության տեսական մոդելը և համապատասխան հարցարանային փաթեթը: Հետազոտության երրորդ փուլում իրականացվել է հարցում և տվյալների վերլուծություն:

Աշխատանքի առավելություններից են ժամանակակից տեսական մեթոդաբանական հիմքի հետ մեկտեղ, ընտրված հուսալի հետազոտական մեթոդներն ու մեթոդիկաները, հետազոտության նպատակին համապատասխան ընտրված համակազմը, արդյունքների վերլուծության մեթոդների ընտրությունը:

Աշխատանքը ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ հայերեն մշակմամբ ստեղծվել է մի հարցաթերթ՝ վալիդության և հուսալիության չափանիշներին բավարարող, որը ունի կարևոր ախտորոշիչ նշանակություն առողջ սնվելու, ծխելը թողնելու և մարզվելու մտադրությունների հիմքում ընկած սոցիալ-կոզնիտիվ գործոնների դրսևորման առանձնահատկությունները ուսումնասիրելու համար: Ստացված տվյալները կարող են օգտագործվել առողջության պահպանման ուղղված ծրագրերում: Ստացված արդյունքները արդեն իսկ ներդրվել են անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության մասնագիտացում ունեցող ուսանողների համար

նախատեսված «Առողջության հոգեբանություն և խորհրդատվություն» մագիստրոսական կրթական ծրագրում:

Նշված բոլոր առանձնահատկությունների կողքին, հատկապես կարելի է կարևորել այն միտքը, որ հոգեբանական գիտության մեջ առողջության հոգեբանությունը համեմատաբար նոր ճյուղ է՝ նոր հետազոտություններով: Այն ծագել է հոգեմարմնական և վարքային բժշկության հայեցակարգերի խաչմերուկում: Ինչպես իրավացիորեն նշված է ատենախոսության մեջ, առողջության հոգեբանության հիմնարար գաղափարը կենսա-հոգե-սոցիալական մոդելն է (biopsychosocial model): Այս իմաստով գիտական այն խնդիրը, որ դրվում է նմանօրինակ հետազոտությունների և դրանց վերջնական արդյունքերի առաջ, այն է՝ տարբերակել և հստակեցնել առողջ և անառողջ սովորությունների սահմանները, ամրապնդել առողջությունը և ընդհանուր լավակեցությունը, ամբողջովին իրականացված է պատշաճ կերպով:

Ատենախոսության վերաբերյալ կան հետևյալ դիտողությունները և առաջարկությունները.

ա) Մեթոդաբանության մշակմանը վերաբերող բաժնում (3.1.2; էջ 81) նշվում է, որ այն հիմնվում է սոցիալ-կոգնիտիվ և վարքի կարգավորման մոտեցումների վրա: Հետազոտության արդյունքերի վերլուծության և մեկնաբանության, ինչպես նաև ամփոփիչ մասերում հատկապես վարքի կարգավորման մոտեցումը չի գտնում իր հստակ արտացոլումը: Ցանկալի կլիներ այս ուղղությամբ ծավալվել, քանի որ այն կարող էր հանդես գալ որպես չափելի վերջնարդյունք:

բ) Ընտրանքի քվոտային սկզբունքով (էջ 86) ձևավորման դեպքում ենթադրվում է, որ իրականացվել են քվոտային քայլեր, որոնց վերաբերյալ բացատրությունները բավարար չեն: Այս ուղղությամբ նույնպես անհրաժեշտություն է դառնում հայտարարված քվոտային քայլերի հստակեցումը:

գ) Նշվում է նաև, որ հետազոտության ընտրանքը կարելի է համարել ներկայացուցչական (էջ 87),

Ընտրանքը ներկայացուցչական է համարվում այն դեպքերում, երբ այն կարող է օգտագործվել բնակչության նպատակային խմբի վերաբերյալ պատկերացում և դիտարկումներ ստանալու համար, բացի այդ ներկայացուցչական ընտրանքը փոքր ենթախումբ է, որը համամասնորեն արտացոլում է թիրախային բնակչության շրջանում

առկա որոշակի հասկություններ: Այն լավագույն պատկերացումն է տալիս և ճշգրիտ կերպով արտացոլում ավելի մեծ թիրախային խմբի բնութագրերը ընտրված թիրախային խմբի վերաբերյալ: Ատենախոսության մեջ բացակայում են «ներկայացուցչական ընտրանքի» վերաբերյալ գիտական մեկնաբանությունները և այս դեպքում հավաստիացումը թերի է:

դ) Եթե ատենախոսությանը մոտենանք Առողջության հոգեբանության տեսանկյունից, քանի որ այնտեղ իսկապես արծարծված և հետազոտության են ենթարկված նշված ճյուղին վերաբերող խնդիրներ, ապա կառաջարկեի հստակեցնել, թե առաջնային, երկրորդային և երրորդային կանխարգելման ռազմավարություններից որի՞ն կամ որո՞նց են վերաբերվում իրականացված հետազոտության արդյունքները և եզրակացությունները: Հակառակ պարագայում կատարված աշխատանքը չի գտնում իր գիտագործնական հստակեցված կիրառական նշանակությունը. Ընդ որում կանխարգալման ռազմավարության համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ.

- Առաջնայինը կանխարգելումը որևէ ռազմավարության կամ տվյալ առողջական խնդրի լուսաբանումն է, ինչպես նաև հասարակական տարբեր ոլորտներում, հատկապես կրթական, առողջ ապրելակերպին ուղղված աշխատանքների կազմակերպումը:
- Երկրորդային կանխարգելման ռազմավարությունն առավելապես հիվանդության ռիսկի ցուցանիշն է և դրա կանխարգելման հնարավոր միջոցառումները հոգեհիգիենայի և հոգեպրոֆիլակտիկայի տեսանկյունից:
- Երրորդային կանխարգելումը կամ վերականգնողական փուլը ենթադրում է այն հիմնական աշխատանքները, որոնք ուղղված են արդեն դրսևորված խնդիրներով /ախտանիշներով անհատներին և փորձում են կանխել հետագա վատթարացումը:

Նշված դիտողություններն ու առաջարկությունները չեն արժեզրկում աշխատանքի գիտական և գործնական արժեքը:

Այսպիսով, Աննա Ռուբիկի Հակոբջանյանի՝ «Անձի ինքնակարգավորման մեխանիզմների դերը առողջության պահպանմանն ուղղված վարքում» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որում լուծված են գիտակիրառական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված և արտացոլված են 9 աշխատություններում: Սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում եմ, որ Աննա Հակոբջանյանը արդեն իսկ կայացած գիտաշխատող է, իսկ նրա կողմից ներկայացված «Անձի ինքնակարգավորման մեխանիզմների դերը առողջության պահպանմանն ուղղված վարքում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին: Հեղինակը արժանի է ԺԹ 00.01 «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝



Խաչատուր Վլադիմիրի Գասպարյան

հ. գ. Թ., դոցենտ, Մ. Հերացու անվան ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ

Խաչատուր Վլադիմիրի Գասպարյանի ստորագրությունը հաստատում եմ,

ԵՊԲՀ Գիտական քարտուղար



Բ.գ.դ. պրոֆեսոր Տաթևիկ Գետևոնի Ավագյան

20.11.2020 թ.